Հավելված
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 12-ի
թիվ 55-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** Վերին Պտղնի համայնքի ղեկավարին կից գործող «Համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Գևորգ Պողոսյանի կողմից
**Հաստատվել է՝** համայնքի ավագանու **2016 թվականի դեկտեմբերի 12-ի** թիվ **55- Ն** որոշմամբ

**Վերին Պտղնի 2016թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ..................................................................
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ...........................................................
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ................
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ..........................................................................................
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.................................................................................................
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ ...........................................................................................................

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի զարգացման ծրագրի նպատակն է ներկայացնել համայնքի զարգացման տեսլականը առաջիկա հինգ տարիների համար: Այն հանդիսանում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածը՝ համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինները /ՏԻՄ-երը/՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկա-վարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, ինչպես նաև 210-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատա-սխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Վերին Պտղնի համայնքի ՀԶԾ-ի մշակման հիմքում ընկած է «Տեղական ինքնակա-ռավարման մասին» ՀՀ օրենքի ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանություն» ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն Վերին Պտղնի համայնքի համար առաջիկա հինգ տարիների հիմնական փաստաթուղթն է հանդիսանում:

ՀԶԾ-ի մշակման համար բնակչության շրջանում իրականացված մոնիթորինգի և հարցումների արդյունքում վեր են հանվել համայնքի զարգցման համար խոչընդոտ հանդիսացող և առաջիկա 5 տարիների ընթացքում լուծում պահանջող խնդիրները, ինչի հիման վրա կազմվել են ծրագրեր, որոնց իրականացումը հնարավոր կդառնա՝ ելնելով համայնքի բյուջեի եկամուտներից և հավանական ներդրումներից:

ՀԶԾ-ն ներառում է նաև Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները:

Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի հետ միասին մշակել է 2017-2021թթ ՀԶԾ-ն, որտեղ ներառված են Վերին Պտղնի համայնքի զարգացմանը խթանող մի շարք կարևոր դրույթներ՝

- քաղաքաշինական,
- շրջակա միջավայրի պահպանման,
- աղետների ռիսկերի կառավարման,
- արտադրության խթանման,
- բիզնես ոլորտի ձևավորման և զարգացման,
- կոմունալ ենթակառուցվածքների բարելավմանն ուղված միջոցառումներ:

Համայնքի ղեկավարին կից Խորհրդակցական Մարմինը, զարգացման ծրագիրը կազմելիս, ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացվող ծրագրերը լինեն արդյունավետ, իրատեսական, համապատասխանեն ունեցած ռեսուրսներին և հնարավորինս բարելավեն համայնքի բնակչության սոցիալ տնտեսական վիճակը՝ գտնելով համագործակցության եզրեր ՀՀ տարբեր գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և օտարերկրյա ներդրողների հետ:

# 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Վերին Պտղնի համայնքը հիմնադրվել է 1946 թվականին՝ հիմնականում արտասահմանից գաղթող հայերի համար: Համայնքի նախկին անվանումը եղել է Այգեգործական սովխոզ, որը 1991 թվականին վերանվանվել է Վերին Պտղնի: Համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, մարզկենտրոն Հրազդան համայնքից 35կմ հեռավորության վրա, Երևան-Սևան մայրուղուն հարող աջ և ձախ կողմերում և սահմանակից է Պտղնի, Բալահովիտ, Առինջ համայնքների, ինչպես նաև Երևան համայնքի վարչական տարածքներին, որը հեշտացնում է բնակչության տեղափոխվելը տարբեր համայնքներ: Այժմ համայնքում ապրող բնակչության մեծամասնությունը նախկին Սևանի շրջանի Գեղամավան և Աբովյանի շրջանի Սարանիստ համայնքներից են: Բնակչությունը համայնքի կազմավորման սկզբնական տարիներին զբաղվել է այգեգործությամբ և հողագործությամբ:

Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքը կազմում է 146.97 հա, որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 12.43 հա, բնակավայրերի նշանակության հողեր՝ 104.26 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3.72 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օյեկտների հողեր՝ 22.78 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 1.86 հա, անտառային հողեր՝ 1.86 հա, ջրային հողեր՝ 0.06 հա:

Վերին Պտղնի համայնքի բնակչությունը 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 990 մարդ (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | ընդամենը |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | **990** |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | **226** |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | **11** |

Համայնքի բնակչության 51% կազմում են կանայք և 49% տղամարդիկ: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի մշտական բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (10.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝ | **990** | **510** | **490** |
| | մինչև 1 տարեկան | **9** | **6** | **3** |
| | 1-2 տարեկան | **20** | **4** | **16** |
| | 3-4 տարեկան | **14** | **7** | **7** |
| | 5-6 տարեկան | **29** | **14** | **15** |
| | 7-10 տարեկան | **45** | **20** | **25** |
| | 11-14 տարեկան | **37** | **14** | **23** |
| | 15-17 տարեկան | **27** | **11** | **16** |
| | 18 և ավելի տարեկան | **809** | **432** | **377** |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝ | **112** | **71** | **41** |
| | Տարիքային և աշխատանքային | **93** | **60** | **33** |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | **3** | **1** | **2** |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | - | - | - |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | **1** | - | **1** |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | - | - | - |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | - | - | - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | **2** | | **2** |
| 9. | Հաշմանդամներ | **19** | **11** | **8** |
| 10. | Զբաղվածներ | **242** | **91** | **151** |
| 11. | Գործազուրկներ | **455** | **270** | **185** |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | **11** | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | - | - | |

## *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Վերին Պտղնի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 22-ի N 51-Ն որոշմամբ հաստատված 2016թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **35262.4** հազար դրամ, ծախսերի գծով՝ **63378.4** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **28116.0** հազար դրամ: Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 13-ի թիվ 5-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է **35262.4** հազար դրամ, ծախսերի գծով՝ **63833.8** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **28611.4** հազար դրամ: 2016թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **83.3%՝ 29405.0** հազար դրամ:

Վերին Պտղնի համայնքում նախկինում զարգացած է եղել այգեգործությունը: Համայնքը հատկապես աչքի է ընկել խաղողի և ծիրանի մեծ այգիներով: Սակայն այժմ համայքնում զարգանում են առևտրի և սպասարկման ոլորտները: Համայնքի վարչական տարածքում գործում են թվով 19 խանութ, 32 սպասարկման օբյեկտ:

Համայնքում գործում են 2 արդյունաբերական ձեռնարկություն՝

- ✓ «Որդան Կարմիր» ՍՊԸ՝ զբաղվում է պատաքարերի արտադրությամբ.
- ✓ «Տիգարբո» ՍՊԸ՝ զբաղվում է ցեմենտ-բետոնի պատրաստի հումքի արտադրությամբ

Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Վերին Պտղնի համայնքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ <<Վերին Պտղնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, որը հիմնանորոգված է, ապահովված է ջեռուցման համակարգով: Ունի ժամանակակից տեխնիկական միջոցներ: Դպրոցի անվտանգությունն

ապահովվում է տեսախցիկների միջոցով: Դպրոցի մարզադահլիճը ապահոված է ժամանակակից մարզագույքով: Դպրոցն ունի տարաբնույթ միջոցառումներ անցկացնելու համար համապատասխան կահավորված <<Ակտիվի>> դահլիճ: Դպրոցում գործում են պատմության, պարի և նկարչության խմբակներ:

Դպրոցն ունի համապատասխան լաբորատորիաների կարիք:

Դպրոցի շենքում գործում է մեկ դպրոցահեն նախակրթարան, որը նույնպես հիմնանորոգված և կահավորված է:

Աղյուսակ 3-ում ներկայացված է դպրոցի և նախակրթարանի աշխատողների և սովորողների վերաբերյալ տեղեկատվություն:

**Աղյուսակ 3. Վերին Պտղնի դպրոցի և նախակրթարանի վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | **26** | **96** |
| 2. | Դպրոցահեն նախակրթարան | **1** | **15** |

Վերին Պտղնի համայնքում գործում է «Առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, որը համալրված է արդիական բժշկական սարքավորումներով, ջեռուցման համակարգով: Կենտրոնն ունի 7 աշխատակից: Այն նախատեսված է սպասարկելու հազար բնակչի:

## *2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ*

Վերին Պտղնի համայնքի զարգացման համար նախատեսվում է փնտրել և գտնել միջազգային դոնոր կազմակերպություններ, որոնց հետ համագործակցելով կիրականացվեն համայնքի զարգացմանը խթանող ծրագրեր: Համայնքի համար կարևորագույն խնդիրներից է կոյուղու բացակայությունը, որի կառուցման համար պահանջվում են մեծ գումարներ և աշխատանքներ, ինչի հնարավորությունը համայնքը չունի:

## *2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ*

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),
- ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):

Վերին Պտղնի համայնքի Ֆինանսական կանխատեսումները արվել են 5 տարվա կտրվածքով՝ համեմատելով ելակետային տարվա հետ: Ինչպես նաև բացահայտվել են թե ինչի հիման վրա են արվել կանխատեսումները:

Վերին Պտղնի համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝68.0 %, 81.3%, 2017թ.՝ 87.7%, 2018թ.՝ 101.9%, 2019թ.՝ 102.0%, 2020թ.՝ 104.0%, 2021՝ 104.1 %, ) կազմվում են համայնքի վարչական բյուջեն ձևավորող վերը նշված եկամտատեսակներից (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

**հազար դրամ**

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. փաստացի 01.10.2016 | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **33074.9** | **22511.0** | **35893.4** | **34874.0** | **34902.0** | **35720.0** | **35630.0** |
| **I.** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **27362.6** | **18117.9** | **30036.0** | **29017.0** | **29102.0** | **29920.0** | **29830.0** |
| **1** | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **26775.3** | **17478.3** | **29579.0** | **28100.0** | **28095.0** | **28565.0** | **28665.0** |
| **1.1** | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **18457.7** | **11697.5** | **21343.0** | **20600.0** | **20595.0** | **20865.0** | **20865.0** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 18021.7 | 11397.5 | 20978.0 | 20235.0 | 20230.0 | 20500.0 | 20500.0 |
| | Հողի հարկ | 436.0 | 300.0 | 365.0 | 365.0 | 365.0 | 365.0 | 365.0 |
| **1.2** | **Գույքային հարկեր այլ գույքից** | **5675.2** | **3338.8** | **5200.0** | **5000.0** | **5000.0** | **5100.0** | **5200.0** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 5675.2 | 3338.8 | 5200.0 | 5000.0 | 5000.0 | 5100.0 | 5200.0 |
| **1.3** | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **2642.4** | **2442.0** | **2996.0** | **2500.0** | **2500.0** | **2600.0** | **2600.0** |
| | Տեղական տուրքեր | 2642.4 | 2442.0 | 2996.0 | 2500.0 | 2500.0 | 2600.0 | 2600.0 |
| **1.4** | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | | | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | | | |
| **1.5** | **Այլ հարկային եկամուտներ** | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գումարների նկատմամբ | | | | | | | |
| 2 | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **5713.1** | **5857.4** | **5850.0** | **5857.0** | **5800.0** | **5800.0** | **5800.0** |
| **2.1** | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.2** | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.3** | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 5712.3 | 5857.4 | 5850.0 | 5857.0 | 5800.0 | 5800.0 | 5800.0 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 100.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| **2.4** | **Կապիտալ ներքին** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| **3** | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***  | **621.0** | **639.5** | **497.0** | **917.0** | **1007.0** | **1105.0** | **1165.0** |
| **3.1** | **Տոկոսներ** | | | | | | | |
| **3.2** | **Շահաբաժիններ** | | | | | | | |
| **3.3** | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **336.0** | **312.0** | **447.0** | **447.0** | **447.0** | **480.0** | **490.0** |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 336.0 | 312.0 | 447.0 | 447.0 | 447.0 | 480.0 | 490.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գանձվող վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | | |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում | | | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | **285.0** | **327.5,0** | **50.0** | **250.0** | **320.0** | **370.0** | **400.0** |
| | Տեղական վճարներ | **85.0** | **127.5** | **50.0** | **50.0** | **70.0** | **120.0** | **150.0** |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 250.0 | 250.0 | 250.0 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **0.0** | **0.0** | **0.0** | **220.0** | **240.0** | **255.0** | **275.0** |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 0.0 | 0.0 | 0.0 | 220.0 | 240.0 | 255.0 | 275.0 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | |
| 3.7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.9 | **Այլ եկամուտներ*** | **2472.6** | **2437.9** | **0.0** | **2500.0** | **2600.0** | **2800.0** | **3000.0** |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | եկամուտներ | | | | | | | |
| II. | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | **2472.6** | **2437.9** | **0.0** | **2500.0** | **2600.0** | **2800.0** | **3000.0** |
| 1 | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 2 | **Պաշարների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 3 | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 4 | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | **2472.6** | **2437.9** | **0.0** | **2500.0** | **2600.0** | **2800.0** | **3000.0** |
| | Հողի իրացումից մուտքեր | 2472.6 | 2437.9 | 0.0 | 2500.0 | 2600.0 | 2800.0 | 3000.0 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| III. | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)** | | | | | | | |
| Ա. | **ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)** | | | | | | | |
| 1 | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| 2 | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| 2.1 | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ծեռքբերում | | | | | | | |
| 2.2 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| 2.3 | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | **39009.9** | **28611.4** | **5100.0** | **2000.0** | **3000.0** | **5000.0** | **6000.0** |
| 2.4 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | | | | | | | |
| 2.5 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | | | | | | | |
| 2.6 | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | **465.0** | **3000.0** | | | | | |
| | **որից՝ ծախսերի ֆինանսավորմանը** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | | | | |
| Բ. | **ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ** | | | | | | | |
| 1 | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | - փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

## Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն ( եկամտների և ծախսերի կանխատեսումը)

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկան ողև | 2017թ. կանխ. | *2015թ փաստ.նկատ %* | 2018թ. կանխ. | *2015թ փաստ.նկատ %* | 2019թ. կանխ. | *2015թ փաստ.նկատ %* | 2020թ. կանխ. | *2015թ փաստ.նկատ %* | 2021թ. կանխ. | *2015թ փաստ.նկատ %* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 34220.5 | **30006.0** | **87.7** | **34874.0** | **101.9** | **34902.0** | **102.0** | **35720.0** | **104.4** | **35630.0** | 104.1 |
| Հարկային եկամուտներ, որից | 26807.0 | 26908.0 | 100.3 | 25965.0 | 96.9 | 25595.0 | 95.5 | 25965.0 | 96.9 | 26065.0 | 97.2 |
| Հողի հարկ | 407.0 | 365.0 | 89.7 | 365.0 | 68.7 | 365.0 | 89.7 | 365.0 | 89.7 | 365.0 | 89.7 |
| Գույքահարկ | 24600.0 | 26543.0 | 107.9 | 25600.0 | 104.0 | 25230.0 | 102.6 | 25600.0 | 104.0 | 25700.0 | 104.5 |
| Տեղական տուրքեր | 2844.0 | 2996.0 | 105.3 | 2500.0 | 87.9 | 2500.0 | 87.9 | 2600.0 | 91.4 | 2600.0 | 91.4 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 5712.3 | **5758.0** | 100.8 | **5857.0** | **100.8** | **5800.0** | **101.5** | **5800.0** | 101.5 | 5800.0 | 101.5 |
| Այլ եկամուտներ | 657.2 | 497.0 | 75.6 | **897.0** | **135.7** | **1007.0** | **153.2** | **1105.0** | 108.1 | 1165.0 | 177.2 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | | | | | |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 39009.9 | 5100.0 | 13.0 | **12000.0** | **30.7** | **13000.0** | **33.2** | 15000.0 | 38.4 | 16000.0 | 40.9 |
| **Ընդամենը** | 73230.4 | **46093.4** | 63.0 | **48874.0** | **66.7** | **50902.0** | **69.5** | 55720.0 | 76.1 | 57630.0 | 78.7 |
| **Ընդամենը ծախսեր** | 73230.4 | **46093.0** | 63.0 | **48874.0** | **66.7** | **50902.0** | **69.5** | 55720.0 | 76.1 | **57630.0** | 78.7 |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում | 34220.5 | 35893.4 | 104.9 | 34874.0 | 101.9 | 34902.0 | 102.0 | 35720.0 | 104.4 | 35630.0 | 104.1 |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 23787.2 | 22914.0 | 96.3 | 23914.0 | 100.5 | 23914.0 | 100.5 | 23914.0 | 100.5 | 23914.0 | 100.5 |
| Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս | 7907.3 | 4950.0 | 62.1 | 6859.5 | 86.7 | 6490.5 | 82.1 | 7305.5 | 92.4 | 7015.5 | 88.7 |
| Սուբսիդիաներ | | | | | | | | | | | |
| Դրամա-շնորհներ | 200.0 | 200.0 | 100.0 | 500.0 | 250.0 | 600.0 | 300.0 | 600.0 | 300.0 | 700.0 | 350.0 |
| Սոցիալական նպաստներ | 2200.0 | 2064.0 | 93.8 | 2100.0 | 95.5 | 2400.0 | 109.1 | 2500.0 | 113.6 | 2500.0 | 113.6 |
| Այլ ծախսեր | 1126.0 | 0.0 | 0.0 | 1500.0 | 133.2 | 1500.0 | 133.2 | 1400.0 | 124.3 | 1500.0 | 133.2 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում | 39009.9 | 5100.0 | 13.0 | 12000.0 | 30.8 | 13000.0 | 13.3 | 15000.0 | 38.5 | 16000.0 | 41.0 |
| Հիմնական միջոցներ | 39009.9 | 5100.0 | 13.0 | 12000.0 | 30.8 | 13000.0 | 13.3 | 15000.0 | 38.5 | 16000.0 | 14.0 |

## *2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Վերին Պտղնի համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են՝

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի ճանապարհների բարեկարգումը,

3. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը,
4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը,
5. Համայնքում գյուգատնտեսության զարգացման խթանումը
6. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Համայնքի զարգացման համար վերը նշված կարևոր խդիրների լուծումը կապված է համայնքի եկամուտներից, որի բավարար լինելու դեպքում հնարավոր կլինի կառուցել մարզական, մշակութային հաստատություններ, որը կլուծեր համայքում ակտիվ մշակութային և մարզական կյանքի, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի կազմակերպումը, ինչն էլ իր հերթին կստեղծեր աշխատատեղեր համայնքի բնակչության համար՝ դրանով իսկ վերացնելով բնակչության սոցիալական պաշտպանության հարցը:

Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար ամենամեծ խոչընդոտը հանդիսանում է ոռոգման գրագծի բացակայությունը, որի լուծումը նույնպես կապված է համայնքի եկամուտների բավարար լինելու հետ:

## *2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Համայնքը սահմանակից է Երևան համայնքին
- ✓ Համայքն ունի ժամանակակից գերհագեցած բուժամբուլատորիա
- ✓ Համայնքն ունի գիշերային լուսավորություն
- ✓ Համայնքի տարածքում կան մի շարք կազմակերպություններ

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Ոռոգման ջրի բացակայություն
- ✓ Գործազրկության առկայություն,
- ✓ Կոյուղու բացակայություն
- ✓ Նոր և Նորավան թաղամասերի ճանապարհների մասնակի անբարեկարգ վիճակ
- ✓ Խաղահրապարակների, ժամանցի վայրերի բացակայություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Մեծ քանակի աշխատուժի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Համայնքի տարածքում գործող կազմակերպությունների գործունեության դադարելը,
- ✓ Գործազրկության մակարդակի աճը,
- ✓ Բնակչության արտագաղթը:

# 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## *3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ*

Վերին Պտղնի համայնքը տարիների ընթացքում մեծ եռանդ ներդնելով ՝ բազմաթիվ ծրագրեր իրականացնելու արդյունքում, դարձել է հանրապետության գեղեցիկ, բարեկարգ, զարգացած բնակավայրերից մեկը:

Համայնքի կարևորագույն նպատակներից մեկն է ունենալ այնպիսի ծրագրեր, որոնք կխթանեն համայնքի բնակիչների զբաղվածությանը ,հանգստի կազմակերպմանը ,սոցիալ- տնտեսական մակարդակի բարձրացմանը:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 4% | 4% | 3% | 2% | 2% |
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 0.1% | 0.16% | 0.8% | 2.3% | 0.25% |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 1% | 1.5% | 2% | 2.5% | 3% |

## *3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում,
- ✓ Բակերի կանաչապատում,
- ✓ Նոր թաղամասի մասնակի լուսավորություն ,
- ✓ Նորավան թաղամասի ասֆալտապատում
- ✓ Ոռոգման ցանցի կառուցում,
- ✓ Գլխավոր պարզեցված հատակագծի կազմման աշխատանքների ավարտ:

**Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)**

| **Տրամաբանական մոդելի բաղադրիչ** | **2017** | **2018** | **2019** | **2020** | **2021** |
|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | |
| **1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին** | 4% | 4% | 3% | 2% | 2% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **(արտահայտված տոկոսով)** | | | | | |
| **2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ ,արտահայտված տոկոսով** | **0.1%** | **016%** | **0.8%** | **2.3%** | **0.25%** |
| **3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով** | 1% | 1.5% | 2% | 2.5% | 3% |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ | | | | | |
| **Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում** | | | | | |
| **Բակերի կանաչապատում** | | | | | |
| **Նոր թաղամասի մասնակի լուսավորություն** | | | | | |
| **Նորավան թաղամասի ասֆալտապատում** | | | | | |
| **Ոռոգման ցանցի կառուցում** | | | | | |
| **Գլխավոր պարզեցված հատակագծի կազմման աշխատանքների ավարտ** | | | | | |

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1

«Համայնքի Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում »

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Բնակիչների<br>դժվար<br>տեղաշարժ</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝ Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում, ինչի արդյունքում համայնքը կլինի ավելի բարեկարգ և գեղեցիկ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>12075,0</td><td>12075,0</td><td>12000,0</td><td>12150,0</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Թաղամասի ասֆալտապատումը կհեշտացնի մարդկանց և մեքենաների ազատ տեղաշարժը:</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին դոնոր կազմակերպությունների փնտրում<br>2- գումարների հայթհայթում<br>3-մրցույթի հայտարարում<br>4-պայմանագրի կնքում ,<br>5 աշխատանքների սկսում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝0<br>Կապիտալ ծախսեր՝48300,0<br>Ընդհանուր բյուջեն՝48300,0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Անբավարար եկամուտներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Իրականացնել Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում, ինչի արդյունքում Վերին Պտղնի համայնքի ևս մեկ փողոց կլինի ամբողջական ասֆալտապատ:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2

## << Բակերի  կանաչապատում  >>

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Անբարեկարգ<br>բակեր</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Բակերի  կանաչապատում   ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանաչապատել համայնք մտնող բակային տարածքները՛ էլ ավելի գեղեցիկ դարձնելու նպատակով:</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>2000.0</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>Գեղեցիկ և թթվածնով հարուստ տարածք համայնքի բնակիչների համար:</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Գումարների հավաքագրում<br>2. Գործողությունների պլանավորում<br>3. Աշխատանքների սկսում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝0<br>Կապիտալ ծախսեր՝2000,0<br>Ընդհանուր բյուջեն՝ 2000,0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Մարդկային</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Անբավարար եկամուտներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018-2018</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Իրականացնել համայնքի  սկզբնամասում գտնվող բակերի կանաչապատում և բարեկարգում, ինչի արդյունքում համայնքը կդառնա էլ ավելի գեղեցիկ:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3

<< Նոր թաղամասի մասնակի լուսավորություն >>

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Բնակիչների անվտանգության պակաս</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Ծրագրի իրականացման արդյունքում կլուսավորվեն համայնքի գրեթե բոլոր թաղամասեր:</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>1300,0</td><td>0</td><td>0</td><td>0</td><td>0</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>Թաղամասի լուսավորությունը թույլ կտա բնակիչներին անվտանգ զբոսնել երեկոյան ժամերին</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Բյուջեի պլանավորում<br>2. Ծախսերի վերհանում<br>3. Ապրանքների ձեռքբերում<br>4. Աշխատանքների սկիզբ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝0<br>Կապիտալ ծախսեր՝1300,0<br>Ընդհանուր բյուջեն՝ 1300,0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Չկա</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2017</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Իրականացնել համայնքի թաղամասերի ամբողջական լուսավորություն, ինչի արդյունքում կունենանք լուսավոր և անվտանգ համայնք:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 4

<< Նորավան թաղամասի ասֆալտապատում>>

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Բնակիչների դժվար տեղաշարժ</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝ Նորավան թաղամասի մասնակի ասֆալտապատում ինչի արդյունքում համայնքը կլինի ավելի բարեկարգ և գեղեցիկ:</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td></td><td></td><td>51450,0</td><td>51450,0</td><td>0</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Թաղամասի ասֆալտապատումը կհեշտացնի մարդկանց և մեքենաների ազատ տեղաշարժը</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին դոնոր կազմակերպությունների փնտրում<br>2- գումարների հայթհայթում<br>3-մրցույթի հայտարարում<br>4-պայմանագրի կնքում ,<br>5 աշխատանքների սկսում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝0<br>Կապիտալ ծախսեր՝102900,0<br>Ընդհանուր բյուջեն՝ 102900,0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Եկամուտների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2019- 2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Իրականացնել Նորավան թաղամասի ասֆալտապատում, ինչի հետևանքով համայնքը այլևս չի ունենա առանց ասֆալտապատ թաղամասեր:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 5

<< Ոռոգման ցանցի կառուցում >>

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գյուղատնտեսության բացակայություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Ոռոգման ցանցի կառուցումը հնարավորություն կտա բնակչությանը զբաղվելու գյուղատնտեսությամբ:</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td></td><td></td><td>10220,0</td><td>10220,0</td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>Ցանցի կառուցումը բնակչությանը հնարավորություն կտա մշակելու իրենց հողատարածքները:</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին դոնոր կազմակերպությունների փնտրում<br>2- գումարների հայթհայթում<br>3-մրցույթի հայտարարում<br>4-պայմանագրի կնքում ,<br>5 աշխատանքների սկսում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝0<br>Կապիտալ ծախսեր՝20440,0<br>Ընդհանուր բյուջեն՝ 20440,0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Եկամուտների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018- .2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Վերին Պտղնի համայնքում ոռոգման ցանցի կառուցման հետևանքով զարկ կտրվի գյուղատնտեսությանը, ինչի արդյունքում համայնքի բնակիչները կկարողանան մշակել իրենց հողատարածքները և զբաղվել գյուղատնտեսությամբ: Վատ կլիմայական պայմանների բացակայության դեպքում կիրացվի մշակված բերքը և կբարձրանա բնակիչների սոցիալական վիճակը:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 6

## << Համայնքի գլխավոր հատակագծի կազմման ավարտ >>

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի չճշտված քարտեզ | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքի գլխավոր հատակագծի կազմման ավարտ, որի նպատակն է ունենալ համայնքի ճշգրտված քարտեզ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 4600,0 | 340,0 | | | | 0 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքի բնակչության սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ճշտված չափեր | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 4600,0 | 340,0 | | | | |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0 | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | Ծրագրի ավարտ | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝4940,0<br>Ընդհանուր բյուջեն՝ 4940,0 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Եկամուտների բացակայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2016 -.2017 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Վերին Պտղնի համայնքը չուներ գլխավոր հատակագիծ, ինչի արդյունքում համայնքի բնակչության զգալի մասը չուներ սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի ճշտված չափեր: | | | | | | |

# 4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Վերին Պտղնի համայնք ՀԶԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**(Վերին Պտղնի համայնքապետարան )**

**(2017-2021 թթ.)**

| Պարտադիր խնդիր | | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բյուջետա-վարկած միջոցներ | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | Բարեգործություն/նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցու-թյուն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| 1 Նոր թաղամասի մասնակի ասֆալտապատում | | | 12075,0 | 12075,0 | 12000,0 | 12150,0 | | | | | | | | | | | | |
| 2.Բակերի կանաչապատում | | | 2000.0 | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. Նոր թաղամասի մասնակի լուսավորություն | | 1300,0 | | | | | | | | | | | | | | | | |
| 4. Նորավան թաղամասի ասֆալտապատում | | | | 51450,0 | 51450,0 | | | | | | | | | | | | | |
| 5.Ոռոգման ցանցի կառուցում | | | | 10220,0 | 10220,0 | | | | | | | | | | | | | |
| 6 Գլխավոր հատակագծի կազմման ավարտ | | 340,0 | | | | | | | | | | | | | | | | |

# 5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**Աղյուսակ8**-*ում* ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

**Աղյուսակ8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ**

**( ____________ թվականներ)**

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականություն | | Ցուցանիշի տվյալների աղբյուր | Ցուցանիշի տվյալների մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)** | | | | | | | | | | | | | | | | | | X | Մարզ պետա -րան | Փաստա թղթայի ն ուսումն ասիրու թյուն/հ արցազր ույց |
| **2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով** | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայ նքա- պետա րան | Փաստա - թղթայի ն ուսումն ա- սիրությ |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | ուն |
| **3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդտարվա համեմատ արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով** | | | | | | | | | | | | | | | | | | X | ՀՀ Ոստի կանու թ-յուն | Հարցու մ |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **1.Ակտիվմշակութայիննմարզ ականկյանքիկազմակերպու մը՝երիտասարդությաններգ րավմամբ** | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայ նքա-պետա րան | Փաստա-թղթայի ն ուսումն ա-սիրությ ուն |
| **2. Համայնքիկառուցապատում ը, բարեկարգումըևկանաչապա տումը, կոմունալտնտեսությանաշխ ատանքներիապահովումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2.1. Համայնքի փողոցների բարեկարգում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայ նքա-պետա րան | Փաստա-թղթայի ն ուսումն ա-սիրությ ուն |
| 2.3. Բակային տարածքների բարեկարգում ու ասֆալտապատում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայ նքա-պետա րան | Փաստա-թղթայի ն ուսումն ա-սիրությ ուն |
| 2.4. Ոռոգման ցանցի կառուցում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայ նքա-պետա րան | Փաստա-թղթայի ն ուսումն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | ա-սիրությ ուն |
| **5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատություններիհիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով** | | | | | | | | | | | | | | | | | | | | |

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Վերին Պտղնի համայնքի ՀԶԾ-ն համայնքի համար 2017-2021թթ ընթացքում հանդիսանալու է գործունեության հիմնական ուղեցույց, որի նպատակն է լինելու համայնքի բարեկեցության ապահովումը:

ՀԶԾ-ն մշակելիս հաշվի է առնվել համայնքի թույլ և ուժեղ կողմերը, համայնքի հնարավերությունները, համայնքի բյուջեի եկամուտները ապահովող եկամտատեսակները որոնք իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում համայնքի ֆինանսական կարողությունների վրա:

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի տեղական ինքկառավարման մարմինների ջանքերն ու աշխատանքը՝ իրականացնելով համապատասխան միջոցառումներ՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում կյանքի կոչելով համայնքի իղձերը:

ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Զարգացման ծրագիրը իրագործելով Վերին Պտղնի համայնքապետարանը պատրաստվում է համագործակցության եզրեր փնտրել պետական կառույցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղի բիզնես սեկտորի և շահագրգիռ այլ անձանց հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին՝ ժամանակ առ ժամանակ կազմակերպելով բաց լսումներ, որի միջոցով կներկյացվի կատարված աշխատանքների հաշվետվություն համայնքի բնակիչներին: